Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ թղթ.-անդամ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՐԱ ԲԱՆՎՈՐ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԸ

Համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ և ուսուցիչ Կարլ Մարքսը իր մեծ բարեկամ Ֆրիդրիխ Էնգելսի հետ միասին դաստիարակեց բանվոր հեղափոխականների մի ամբողջ սերունդ, որը մինչև վերջ հավատարիմ մնալով Մարքսին ու Էնգելսին, նրանց անմիջական ղեկավարությամբ, պայքարեց կապիտալիզմի դեմ, նոր հասարակարգի կառուցման համար։

Բուրժուազիան և նրա գաղափարախոսները մեծամտաբար արհամարհելով հեղափոխական պրոլետարիատի ներկայացուցիչներին, աղավաղել են նրանց տեղն ու դերը դասակարգային պայքարի, սոցիալիստական շարժումների մեջ։ Մարքսն ու Էնգելսը վճռականորեն մերկացրել են նման տենդենցները։ Դեռևս 1850 թ. Էնգելսն ընդգծելով հարյուր հազարավոր բանվորների անձնվեր պայքարը հեղափոխության հաղթանակի համար, խստորեն դատապարտում էր այն մարդկանց, որոնք բանվորների մեջ տեսնում էին ոչ այլ ինչ, քան դյուրավառ նյութ՝ ընդունակ դառնալու ագիտացիայի ու շահագործման օբյեկտ կամ ծառայելու որպես թնդանոթի միս։ «Մեր դեմոկրատները,—գրում էր Էնգելսը,— շատ ագետ են և շատ են ներծծված բուրժուական ոգով, որպեսզի հասկանան պրոլետարիատի հեղափոխական վիճակը, ըմբռնեն բանվոր դասակարգի ապագան։ Այդ պատճառով էլ նրանց համար ատելի են նաև այն իսկական-պրոլետարական բնավորությունները, որոնք բավականին հպարտ են, որպեսզի թծեն նրանց, բավականին խորաթափանց են, որպեսզի թույլ տան այդ «դեմոկրատներին» օգտագործեն իրենց, բայց որոնք այնուամենայնիվ զենքը ձեռներին հանդես են գալիս, երբ պետք է տապալել տիրող իշխանությունը, նրանք ամեն մի հեղափոխական շարժման մեջ անմիջականորեն ներկայացնում են պրոլետարիատի կուսակցությանը»[1]։

Մարքսը, Էնգելսն ու Լենինը պրոլետարիատի կուսակցության առաջնահերթ խնդիրն էին համարում ըստ արժանվույն գնահատել բանվոր հեղափոխականներին, ցույց տալ նրանց արժանիքներն ու վաստակը։ Իր հավատարիմ աշակերտ և գինակից ռուս բանվոր հեղափոխական Բ. Վ. Բարուշկինի մասին գրած մահախոսականում Վ. Ի. Լենինը նշում էր, որ մենք մտադիր ենք մի բրոշյուր հրատարակել այդպիսի բանվոր-հեղափոխականների մասին։ Այդպիսի բրոշյուրով, նշում էր Լենինը, երիտասարդ բանվորները «կսովորեն, թե ինչպես պետք է ապրի ու գործի ամեն մի գիտակից բանվոր»[2]։

Բանվոր մարքսիստ հեղափոխականների, լենինյանների մասին հրապարակվել են բազմաթիվ արժեքավոր գործեր։ 1961 թ. Մոսկվայում ռուսերեն լեզ-

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 7, стр. 193.

[2] *Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 16, էջ 477։*

վով լույս տեսավ «Մարքսը և Էնգելսը և առաջին պրոլետարական հեղափոխությունը» գիրքը, որտեղ հետաքրքիր հոդվածներ կան Իոսիֆ Մոլի, Ֆրիդրիխ Լեսների և Ջորջ Գարնիի մասին։ Սակայն Մարքսի ու Էնգելսի բանվոր-ընկերների մասին, ինչպես մեզ մոտ, այնպես էլ արտասահմանում շատ քիչ գրականություն կա։ Նրանց կյանքն ու գործունեությունը միանգամայն անբավարար է լուսաբանված նաև «Սովետական մեծ հանրագիտարանում» և «Սովետական պատմական հանրագիտարանում»։

Կ. Մարքսի զրույցը բանվորների հետ

Աշխարհում առաջին միջազգային կոմունիստական կազմակերպության Կոմունիստների միության (1848 թ.), նրա անմիջական հաջորդ, բանվորների միջազգային կազմակերպության՝ Առաջին ինտերնացիոնալի (1864 թ. ստեղծման համար մղված պայքարում, աշխատավոր մարդկությանը ամեն տեսակի շահագործումից ազատագրելու մեծ հերոսամարտերում, Մարքսի Էնգելսի հավատարիմ ընկերներն ու աշակերտներն էին բանվոր-հեղափոխականներ Իոսիֆ Մոլը, Հենրիխ Բաուերը, Ֆրիդրիխ Լեսները, Ջորջ Գարնիի Էժեն Դյուպոնը, Հերման Յունգը, Իոհան Էկկարիուսը, Ավգուստ Բեբելը և շ

ուրիշներ, որոնց անունները պայծառ տառերով են գրված բանվոր դասակարգի հեղափոխական ազատագրական շարժման հերոսամարտերում։

Իոսիֆ Մոլը (1813—1849) ծնվել է Գերմանիայի Քյոլն քաղաքում, մասնագիտությամբ ժամագործ էր։ Մոլը ակտիվ մասնակցություն էր ունեցել Ֆրանսիայի, Բելգիայի և Անգլիայի բոլոր լեգալ և անլեգալ հեղափոխական կազմակերպությունների գործունեությանը։ Մոլն սկզբում հեղափոխական դեմոկրատ էր, ուտոպիական կոմունիզմի ուսմունքի կողմնակից։ 1836 թ. Փարիզում նա մտնում է «Արդարների միության» գերմանական գաղտնի կազմակերպության մեջ, որի անդամները գերազանցապես պրոլետարական տարրեր էին։ 1840 թ. նա Կարլ Շապերի, Հենրիխ Բաուերի և այլ հեղափոխական ընկերների հետ միասին Լոնդոնում հիմնում է գերմանական բանվորների լուսավորչական ընկերություն, որը շուտով վերանվանվում է կոմունիստական և ընդունում է «բոլոր մարդիկ եղբայրներ են» նշանաբանը։ Ընկերությունը բանվորների մեջ պրոպագանդում էր կոմունիզմի գաղափարները։ Մոլը միաժամանակ մասնակցում էր 1845 թ. Լոնդոնում հիմնադրված «Եղբայր դեմոկրատներ» ընկերության գործունեությանը և մտերիմ հարաբերության մեջ էր շարտիստներ Ջ. Կարնիի և Է. Ջոնսոնի հետ։

Նամակագրական և անձնական կապեր հաստատելով Մարքսի և Էնգելսի հետ, Մոլը մեծ դեր էր կատարում Կոմունիստների միության ստեղծման գործում։ 1847 թ. նա արդեն միության անդամ էր, նրա երկու կոնգրեսների մասնակիցը և Կենտկոմի անդամը։ Մարքսի և Էնգելսի անմիջական ազդեցությամբ Մոլը շրջադարձ է կատարում դեպի գիտական կոմունիզմը և դառնում է մարքսիզմի ջերմ պաշտպանն ու պրոպագանդիստը։ Նա անձնվիրաբար պայքարում է միության ծրագրի՝ Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի կենսագործման համար։

1849 թ. Մոլը ակտիվ մասնակցություն է ունենում Պֆալց-Բադենյան ապստամբությանը, Էնգելսի հետ միասին մարանշում է միևնույն ջոկատում և մահացու վիրավորվելով հերոսաբար զոհվում։

Իոսիֆ Մոլը եռանդուն, համարձակ և կայուն հեղափոխական պրակտիկ էր, միշտ պատրաստ կատարելու կուսակցության ամենաբարդ և վտանգավոր հանձնարարությունները։ Մոլը մեծ հեղինակություն ուներ բանվորների և կուսակցական ընկերների շրջանում։ Ունենալով համեստ բնավորություն, նա երբեք իր անձը առաջ չէր մղում։ Հանձին Մոլի նա կորցրի հին բարեկամը, գրել է Էնգելսը, իսկ կուսակցությունը՝ ամենաանխոնջ, խիզախ և վստահելի առաջավոր մարտիկներից մեկին։[3]

Մոլի հետ միասին «Արդարների միության» և «Եղբայր դեմոկրատների» ընկերության ղեկավարներից էր Հենրիխ Բաուերը։ Մասնագիտությամբ Բաուերը կոշկակար էր։ Զինվորագրվելով մարքսիզմին, նա մեծ դեր էր կատարում «Արդարների միությունը» «Կոմունիստների միության» մեջ վերակառուցելու գործում։ Նա մտնում էր միության Կենտկոմի կազմում և կատարում նրա պատասխանատու հանձնարարությունները, ջերմորեն պաշտպանում էր Մարքսին ու Էնգելսին՝ մանրբուրժուական աղանդավորական ֆրակցիաների դեմ մղած պայքարում։ Էնգելսը Բաուերին դասել է առաջին պրոլետարական հեղափոխականների շարքում, անվանել նրան իսկական մարդ։ «Նա աշխույժ, կայտառ

[3] См. К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 7, стр. 193.

և սրամիտ երիտասարդ տղա էր,— գրել է Էնգելսը Բաուերի մասին,— որի փոքրիկ մարմնում թաքնված էր նաև շատ ճարպիկություն և վճռականություն»[4]։

Ռեակցիոն ուժերի հալածանքները, բանտն ու աքսորը ավելի են կոփում Բաուերի ուժեղ կամքն ու բանվորական ոգին։ Հենրիխ Բաուերը գերմանական և միջազգային բանվորական շարժման գործիչներից էր, Մարքսի աշակերտներից, որի անունը սերտորեն կապված է «Կոմունիստների միության» պատմության հետ։

Մինչև իր կյանքի վերջը գիտական կոմունիզմի, Մարքսի գաղափարների անխոնջ պրոպագանդիստը մնաց մասնագիտությամբ դերձակ Ֆրիդրիխ Լեսներ (1825—1910 թթ.)։ Դեռ երիտասարդ հասակում նա ոտքով շրջագայում է Գերմանիայում, ականատես լինում աշխատավոր ժողովրդի ծանր վիճակին։ 1847 թ. Լեսները անձամբ ծանոթանում է Մարքսի ու Էնգելսի հետ, մտնում Կոմունիստների միության մեջ և դառնում նրա ակտիվ գործիչներից մեկը։ «Երբ ես տեսա Մարքսին,— հիշում է Լեսները,— անմիջապես զգացի նրա մեծությունը և այդ զարմանալի մարդու հսկայական գերազանցությունը։ Ինձ համակեց վստահության այն զգացումը, որ այդպիսի առաջնորդների ղեկավարության տակ գտնվող բանվորական շարժումը կհաղթանակի»։ Խոսելով իր վրա Մարքսի թողած հսկայական ազդեցության մասին, Լեսները նշել է, որ Մարքսի հետ ունեցած զրուցներից ամեն անգամ կարելի էր ստանալ ինչ-որ նոր բան, որ Մարքսի գիտելիքները բոլոր բնագավառներում անսահման էին։ Մարքսի ու Էնգելսի հետ ունեցած ծանոթությունը,— ընդգծել է Լեսները,— սրանց հիանալի ստեղծագործությունների ուսումնասիրությունը, արդեն այն ժամանակ, 1848 թ. հեղափոխության նախօրեին, օգնեցին նրան վերջնականապես անցնելու հեղափոխական մարքսիզմի դիրքերը։

Լեսները ակտիվ մասնակցություն ունեցավ 1848—1849 թթ. հեղափոխությանը Գերմանիայում։ 1851 թ. հեղափոխական գործունեության համար նա ձերբակալվում է և մեկ տարի անց դատվում Քյոլնում կոմունիստների դեմ կազմակերպված դատական պրոցեսում։ Բանտում և հարցաքննությունների ժամանակ Լեսները իրեն պահում է որպես անվախ ու համոզված հեղափոխական մարքսիստ։ Նա դատապարտվում է երեք տարվա տաժանակիր բանտարկության։ «Կոմունիստների Քյոլնի պրոցեսի մասին» մերկացնող գրքում (1853) Մարքսը անարգանքի սյունին է գամում պրուսական ոստիկանական պետության կողմից կոմունիստական շարժման դեմ ուղղված պրովոկացիոն պայքարի մեթոդները։

Հեղափոխությանը հաջորդող ռեակցիայի դաժան տարիներին Լեսները հետևողականորեն պաշտպանում է հեղափոխության սկզբունքներն ու պահանջները։ «Արիություն, արիություն և կրկին արիություն,— գրում է Լեսները իր օրագրերում,— ապագան կստեղծի ավելի մեծ ու անսպասելի իրադարձություններ։ Մ՛արդ, եղիր նրան արժանի։ Հիշի՛ր, որ դու այդ իրադարձությունների մեջ ես ոչ միայն թեզ համար»։

Բանտի ծանր պայմանները ֆիզիկապես թուլացնում են Լեսներին, բայց նրա հոգին միշտ մնում է կայտառ։ «Ես ծերացա, բայց այդ չի վերաբերում իմ հոգուն, որովհետև այն միշտ կմնա երիտասարդ, իմ կյանքում ինչ էլ որ ես տեսնեմ»,— գրել է Լեսները։

---

4 Նույն տեղում։

Խիզախ հեղափոխականը խորը հավատով գեպի ապագան նշել է. «Կեցցե նոր ժամանակը, կեցցե ապագան։ Նա մերն է»։ Իր օրագրերը Լեսները ավարտում է հետևյալ խոսքերով. «Ես ուրախ եմ, որ մնացել եմ այնպիսին, ինչպիսին էի, և միշտ կլինեմ այն, ինչ եմ»։

1856 թ. ազատվելով բանից, Լեսները մեկնում է Անգլիա, որտեղ Մարքսի ու Էնգելսի անմիջական ղեկավարությամբ շարունակում է իր հեղափոխական ակտիվ գործունեությունը կապիտալի լծից բանվոր դասակարգի ազատագրության համար։

Լեսները Մարքսի գլխավորությամբ և նրա հետ միասին Առաջին ինտերնացիոնալի կազմակերպիչներից ու ղեկավարներից էր։ Լեսները Ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի անդամ էր, նրա գրեթե բոլոր կոնգրեսների ու կոնֆերանսների պատգամավորը։ Նա հետևողականորեն պաշտպանում էր Մարքսի ու Էնգելսի գիծը, անողոք կերպով հանդես էր գալիս նրա բոլոր թշնամիների դեմ։

Ինչպես Մարքսի կենդանության ժամանակ, այնպես էլ նրա մահվանից հետո Լեսները պահպանում էր մարքսիզմի անաղարտությունը, մինչև վերջ հավատարիմ մնալով գիտական կոմունիզմի սկզբունքին։ Նա մերկացնում էր բոլոր տեսակի օպորտունիստներին ու տրեդիոնիստներին։

Մարքսի ու Էնգելսի ստեղծած «Կոմունիստների միության» շարքերում, անգլիական բանվորական շարժման մեջ, հեղափոխական դաստիարակության հիանալի դպրոց անցավ Ջորջ Դարնին (1817—1897)։ Դարնին իր աշխատանքային գործունեությունը սկսում է որպես բանվոր-դրաշար։ Դեռ պատանի հասակից Անգլիայում նա մասնակցում է չարտիստական շարժմանը և դառնում նրա ձախ թևի («ֆիզիկական ուժի» կողմնակիցների) ղեկավարներից մեկը։ Դարնին մասնակցել է բանվորների Լոնդոնի ասոցիացիայի հիմնադրմանը, եղել է չարտիստների կենտրոնական օրգան «Հյուսիսային աստղ» թերթի աշխատակիցը և ապա՝ խմբագիրը։ Նա «Եղբայր դեմոկրատներ» միջազգային դեմոկրատական ընկերության հիմնադիրներից էր։ 40-ական թվականներին, լինելով Մարքսի ու Էնգելսի մտերիմ բարեկամը, նա դառնում է «Կոմունիստների միության» ակտիվ անդամներից մեկը։ 1851 թ. չարտիստական շարժման վայրէջքի պայմաններում Դարնին լուրջ տատանումներ ունեցավ և հեռացավ պրոլետարական հեղափոխական շարժումից։ Սակայն Առաջին ինտերնացիոնալի ստեղծումից հետո Դարնին միանում է նրան և Ամերիկայի Միացյալ Նահանգներից, ուր գտնվում էր նա այդ ժամանակ, վերականգնում է իր նամակագրությունը Մարքսի ու Էնգելսի հետ։ Մարքսը Դարնիին է ուղարկում իր «Կապիտալ»-ի ֆրանսիական հրատարակության առաջին հատորը, կապեր է պահպանում նրա հետ։

Իմանալով Մարքսի մահվան մասին, Դարնին գրում է Էնգելսին. «Քո կորուստը արտասովոր է, ոչ ընտանեկան։ Քո բարեկամությունը և նվիրվածությունը, նրա կապվածությունը քեզ հետ և հավատարմությունը Կառլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի եղբայրական միությունը դարձրին արտակարգ... Ես իզուր եմ խոսքեր փնտրում արտահայտելու քո կորստի մեծությունը, և խորապես կարեկցում եմ քո վշտին ու կիսում եմ այն»։ Մարքսի մասին Դարնին իր մահվանից մեկ տարի առաջ գրել է. «Նա, ով անձամբ գիտեր Մարքսին, կպահպանի նրա մասին միայն լավագույն հուշեր, որպես ամենաարիսիրտ, հանճարեղ և գրավիչ մարդու»։

Առաջին ինտերնացիոնալում Մարքսի հավատարիմ զինակիցներից էր Էժեն Դյուպոնը (1831—1881)։ Սա մասնագիտությամբ երաժշտական գործիքների արտադրության վարպետ էր, գյուտարար բանվոր։ Դյուպոնը լինելով ֆրանսիական ռոցիալիստ, 1848 թ. իր հայրենիքում մասնակցել էր հունիսյան ապստամբությանը, որի պարտությունից հետո անցել էր Անգլիա, որտեղ Մարքսի ազդեցությամբ հաղթահարել էր մանրբուրժուական տատանումները։ Դյուպոնը Առաջին ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի անդամ էր, նրա քարտուղար-թղթակիցը՝ Ֆրանսիայի համար։ Ինտերնացիոնալի մի շարք կոնգրեսներում և կոնֆերանսներում նա ղեկավար դեր էր կատարում, պաշտպանում էր Մարքսի գիծը և վճռականորեն հանդես էր գալիս հակամարքսիստական հոսանքների դեմ, անողոքաբար մերկացնում պրուդոնիստներին, անարխիստ-բակունիստներին, տրեդ-յունիոնիզմը։

Միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչներից էր Շվեյցարիայի ժամագործ բանվոր Հերմոն Յունգը (1830—1901)։ 1848—1849 թթ. Յունգը մասնակցել էր գերմանական հեղափոխությանը, ապա վտարանդվել Անգլիա։ Լոնդոնում նա մտերմացել էր Մարքսի հետ, դարձել նրա հավատարիմ աշակերտներից և զինակիցներից մեկը։ 1864—1872 թթ. Առաջին ինտերնացիոնալի գործունեության ամբողջ ժամանակաշրջանում Յունգը նրա գլխավոր խորհրդի անդամն էր։ Նա կատարում էր Ինտերնացիոնալի քարտուղար-թղթակցի պարտականությունները՝ Շվեյցարիայի համար, իսկ հետո դառնում է նրա խորհրդի գանձապահը։ 70-ական թվականներից Յունգը հեռանում է մարքսիզմից և բանվորական շարժումից։

Կոմունիստների միությունում և Ինտերնացիոնալում Մարքսի ու Էնգելսի ղեկավարությամբ ականավոր դեր է կատարել Բոհան Էկկարիուսը (1818—1889)։ Մասնագիտությամբ նա դերձակ էր, 40-ական թվականներից մասնակցում էր բանվորական շարժումներին՝ Գերմանիայում և Անգլիայում։ 1850 թ. երբ տեղի ունեցավ «Կոմունիստների միության» պառակտումը, նա կանգնեց Մարքսի ու Էնգելսի կողմը։ Մարքսի օգնությամբ Էկկարիուսը գրել է մի շարք աշխատություններ («Խոշոր և մանր կապիտալի պայքարը, կամ դերձակային արհեստը Լոնդոնում», «Ջոն Ստյուարդ Միլլի ազգային տնտեսական ուսմունքի հերքումը բանվորներից մեկի կողմից» և այլն)։ Էկկարիուսը Առաջին ինտերնացիոնալի հիմնադիրներից է։ 1867—1871 թթ. նա եղել է Ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի քարտուղարը, Մարքսի հետ միասին ստորագրել է նրա մի շարք կարևոր փաստաթղթեր։ Կյանքի վերջին տարիներին Էկկարիուսը հեռանում է մարքսիզմից և մասնակցում է տրեդյունիոնիստական, ռեֆորմիստական շարժմանը։

Մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրները բարձր են գնահատել Ավգուստ Բեբելի (1840—1913) հեղափոխական գործունեությունը գերմանական և միջազգային բանվորական շարժման մեջ։ Բեբելը մասնագիտությամբ խառատ էր, Գ. Վ. Պլեխանովի արտահայտությամբ «հանճարեղ խառատ»։ Դեռ պատանեկան տարիներին շրջագայելով հարավային Գերմանիայում և Ավստրիայում, նա տեսել ու զգացել էր բանվորի ծանր վիճակը և մտել բանվորական միությունների մեջ՝ պայքարելու աշխատավորության ազատագրության համար։ Մարքսի ու Էնգելսի խորհրդով ու օգնությամբ Բեբելը իր մերձավոր բարեկամ Վիլհելմ Լիբկնեխտի հետ միասին պայքար է ծավալում ինքնուրույն բանվորական կուսակցության ստեղծման համար։ 1869 թ. նրանք հիմնադրում

են Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը, որը հիմնականում կանգնում է մարքսիզմի սկզբունքների վրա։ 27 տարեկան էր Բեբելը, երբ ընտրվեց Հյուսիս-գերմանական միության ռայխստագի (պառլամենտի) կազմում, իսկ հետագայում նա երկար տարիներ համագերմանական ռայխստագի դեպուտատ էր։ Իր դեպուտատական գործունեության ընթացքում Բեբելը ստեղծում է գերմանական սոցիալ-դեմոկրատների պառլամենտական տակտիկայի հիմունքները։ Ռայխստագի ամբիոնից նա վճռական ու համարձակ հանդես է գալիս պրուսական կառավարության գալթոդական քաղաքականության դեմ, պաշտպանում է Փարիզի կոմունան, որի համար նրան մեղադրում են պետական դավաճանության մեջ և դատապարտում երկու տարվա բանտարկության։ Դատարանում Բեբելը խիզախորեն մերկացնում է կառավարության հափշտակողական և հակաժողովրդական վարքագիծը և ստանում ևս 9-ամսյա կալանք։ Բեբելը միլիտարիզմի և պատերազմի դեմ մղվող պայքարի կրքոտ մարտիկ էր։ Նա խորապես հավատում և հետևողականորեն պայքարում էր սոցիալիզմի հաղթանակի համար։

Իր պրակտիկ գործունեությամբ և մի շարք փայլուն աշխատություններում («Իմ կյանքից», «Կինը և սոցիալիզմը» և այլն) Բեբելը, որպես բանվորական առաջնորդ, մինչև վերջ պաշտպանել է պրոլետարական ինտերնացիոնալիզմի մարքսիստական սկզբունքները։

Մարքսն ու Էնգելսը հոգատարությամբ օգնել են Բեբելին հաղթահարելու իր սխալներն ու մոլորությունները։ Մարքսը Էնգելսին գրած 1882 թ. սեպտեմբերի 16-ի նամակում նշել է, որ Բեբելը «արտակարգ երևույթ է գերմանական (կարելի է ասել «եվրոպական») բանվոր դասակարգի մեջ»։ Վ. Ի. Լենինը Բեբելին համարել է խոշոր հեղինակություն պրոլետարիատի միջազգային շարժման մեջ, փորձված պրակտիկ առաջնորդ, հեղափոխական պայքարի պահանջներին զգայուն սոցիալիստ[5]։

Մինչև իր կյանքի վերջը Բեբելը պաշտպանեց պրոլետարիատի գործը և որպես հավատարիմ մարքսիստ վճռականորեն պայքարեց նրա համար։

«Մարքսն ու Էնգելսը դաստիարակեցին պրոլետարական այնպիսի հեղափոխականների մի հիանալի սերունդ, ինչպիսիք են Ա. Բեբելը, Ի. Վ. Բեկկերը, Է. Վաուլեն, Վ. Վոլֆը, Ֆ. Զորգեն, Պ. Լաֆարգը, Ի. Էկկարիուսը, Լ. Ֆրանկելը և ուրիշներ»[6]։

Մարքսի հավատարիմ աշակերտների ու զինակիցների փայլուն համաստեղության մեջ նրա բանվոր հետևորդները հատուկ տեղ ունեն։ Նրանց պայծառ անունները ընդմիշտ մտել են բանվորական շարժման պատմության մեջ։ Առաջին պրոլետարական հեղափոխականների օրինակով աշխարհի բոլոր ծայրերում աճել են բանվոր մարքսիստների ամբողջ սերունդներ։ Նրանց աղատարար կոչը Ռուսաստանում հատուկ ուժով հնչեց ռուս բանվոր Պյոտր Ալեքսեևի՝ ցարական դատարանում 1877 թ. արտասանած մարդարեական խոսքերում. «Կբարձրանա միլիոնավոր բանվոր մարդկանց մկանոտ ձեռքը և սվիններով պաշտպանվող դեսպոտիզմի լուծը հողմացրիվ կլինի»։ Ուշադրությամբ հետևելով հեղափոխական Ռուսաստանի իրադարձություններին, Մարքսն ու Էնգելսը գիտեին Պ. Ալեքսեևի և նրա ընկերների դատական պրոցեսի մասին։

---

5 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 13, էջ 601։

6 «Գիտական կոմունիզմի հիմնադիրը», թեզիսներ Կարլ Մարքսի ծննդյան 150-ամյակի առթիվ։

«Ռուսաստանը ներկայանում է Եվրոպայում հեղափոխական շարժման առաջավոր ջոկատը»,—ասել են Մարքսն ու Էնգելսը։

1895 թ. Վ. Ի. Լենինը, Մարքսի-Էնգելսի գործի մեծ շարունակողը, Պետերբուրգում ստեղծեց «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը», որը լենինյան կուսակցության առաջին սաղմը հանդիսացավ։ Լենինյան պայքարի միության կազմում իրենց մարտական մկրտությունը ստացան Մարքսի, Էնգելսի, Լենինի հայ հետևորդները։ Հայ առաջին բանվոր մարքսիստներից էին Թիֆլիսի Էնֆիաջիանցի ծխախոտի գործարանի բանվոր Հայկ Փիլոսյանը (Հ. Ադամյան), ներկարար բանվոր Մելիք Մելիքյանը (Դեդուշկա), Ադելխանովի կոշիկի գործարանի բանվոր Աստատուր Կախոյանը (բանվոր Խեչո), Թիֆլիսի երկաթուղային դեպոյի բանվորներ Խ. Քեշիշյանը, Ռ. Մկրտումյանը, Արտեմ Տեր-Հարությունյանը և ուրիշներ։

1900—1901 թթ. առաջավոր բանվորներ Հ. Փիլոսյանի, Դ. Կուզիկյանի և Ա. Կախոյանի նախաձեռնությամբ լույս է տեսնում «Բանվոր» վերնագրով հայերեն անլեգալ թերթը, որը պրոպագանդում էր բանվոր դասակարգի՝ ինքնուրույն քաղաքական կուսակցության մեջ կազմակերպվելու և ցարիզմի ու կապիտալիզմի դեմ քաղաքական պայքար մղելու գաղափարը։ «Բանվոր»-ն ընդգծում էր, որ հաղթանակի համար Ռուսաստանի և Անդրկովկասի բոլոր ազգերի բանվորները պետք է միավորվեն միասնական ինտերնացիոնալ կազմակերպությունում, պետք է հանդես գան համերաշխորեն։

Լենինականցիները հպարտ են, որ իրենց քաղաքային թերթը մոտ կես դար է, ինչ կրում է «Բանվոր» անունը, դրանով իսկ շեշտելով այն ամենաառաջատար դերը, որ խաղացել ու խաղում է բանվոր դասակարգը մարդկության երջանիկ ապագայի՝ կոմունիզմի կառուցման գործում։

Գլխավորը Մարքսի ուսմունքի մեջ,—ասել է Լենինը,—այն պրոլետարիատի, որպես սոցիալիստական հասարակարգի ստեղծողի համաշխարհային պատմական դերի պարզաբանումն էր։ Այդ գաղափարը Մարքսը առաջ է քաշել 1844 թ.։ Այդ ժամանակից անցել է մոտ 125 տարի։ Դիմելով բանվորներին, Մարքսն ասել է. «Դուք պետք է ապրեք քաղաքացիական պատերազմի և միջազգային ճակատամարտերի 15, 20, 50 տարիներ ոչ միայն նրա համար, որ փոխեք գոյություն ունեցող հարաբերությունները, այլ որպեսզի ինքներդ էլ փոխվեք և քաղաքական տիրապետության ընդունակ դառնաք»։

Սովետական Միությունում և աշխարհի մի շարք այլ երկրներում բանվոր դասակարգը կոմունիստական ու բանվորական կուսակցությունների գլխավորությամբ, բոլոր աշխատավորների հետ դաշնակցած նվաճել է քաղաքական իշխանությունը, կառուցել նոր հասարակարգ՝ ազատ ամեն տեսակի ճնշումից։ Սերտ դաշինքով միացել են աշխարհի պրոլետարները, երկրագնդի մոտ մեկերրորդ մասում նրանք լիակատար հաղթանակ են տարել, իսկ մյուս մասում հաջողությամբ պայքարում են իրենց և ողջ մարդկության ազատագրության համար։ Բանվոր դասակարգի համաշխարհային պատմական դերն այդ պայքարում անգնահատելի է։ «Միայն բանվոր դասակարգի ինտերնացիոնալ դաշինքը,—սովորեցնում է Մարքսը,—կարող է ապահովել նրա վերջնական հաղթանակը»[7]։

Մարքսիզմ-լենինիզմի գաղափարները հաղթանակում են ամենուրեք։

---

7 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 16, стр. 336.